ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանին

Հարգելի տիկին Թովմասյան,

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ և 145-րդ հոդվածներով՝ Ձեզ ենք ներկայացնում «Պատիվ ունեմ» և «Հայաստան» խնբակցությունների համատեղ որոշումը Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի թափուր պաշտոնում Էդգար Ֆերդինանտի Ղազարյանի թեկնածության առաջադրման մասին:

Կից ներկայացվում են «Պատիվ ունեմ» և «Հայաստան» խնբակցությունների համատեղ որոշումը և թեկնածուի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

«Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար՝ **Հ. Մամիջանյան**

«Հայաստան» խմբակցության ղեկավար՝ **Ս. Օհանյան**

27.03.2023թ.

Մուտք թ. 4/5665-23
27 03 2023
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

(Քաղվածք «Պատիվ ունեմ» և «Հայաստան» խմբակցությունների համատեղ նիստի)

Նկատի ունենալով, որ մի շարք հասարակական նախաձեռնություններ և իրավապաշտպաններ երկրում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առկա վիճակը գնահատել են խիստ մտահոգիչ, իսկ լուծման ուղղությամբ գործող իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականությունը՝ ձևախեղված: Նրանք Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի թափուր պաշտոնում «Պատիվ ունեմ» և «Հայաստան» խմբակցություններին առաջարկել են Էդգար Ֆերդինանտի Ղազարյանի թեկնածությունը,

Կարևորելով հասարակական և մասնագիտական նախաձեռնությունների հետ համագործակցության շրջանակներում խորհրդարանական ընդդիմության համախորհուրդ գործելակերպը,

Խրախուսելի համարելով նման կարևորության հարցերում թեկնածուների ինքնառաջադրման և պատրաստակամության կամահայտնությունը,

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 145-րդ հոդվածը, Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունների համատեղ քննարկումների ընթացքում ձեռք բերված համաձայնությունները՝

Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» և «Հայաստան» խմբակցությունները

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Ընդառաջել ներկայացվող առաջարկությանը՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի թափուր պաշտոնում առաջադրել Էդգար Ֆերդինանտի Ղազարյանի թեկնածությունը, սահմանված կարգով (պահանջվող պաստաթղթերով) սույն որոշումը ներկայացնել Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով:
2. Թեկնածուին կներկայացնի նույն հանձնաժողովի նախագահ, «Պատիվ ունեմ» խմբակցության անդամ Թագուհի Թովմասյանը:

«Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար՝
Հ. Մամիջանյան

«Հայաստան» խմբակցության ղեկավար՝
Ս. Օհանյան

27.03.2023թ.